

252-122

# Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Ա. — ՇՐՋԱՆ Ժ.Թ. 1886 ՏԱՐԻ Ժ.Ը. ՅՈՒՆՎԱՐ 31

## ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

Ամէն ոք տարեսկզբին հանդիպելով իւր բարեկամին և ծանօթին, զեղուն զգացմամբ բարեմաղթութիւններ անելով «Շնորհաւոր նոր տարի» է ասում. նոյնը կրկնում ենք և մենք դէպի մեր ընթերցողները, բարեմաղթելով որ Աստուած մեր բարեկամներին շնորհաւորելու առիթով արտայայտած մեր բոլոր բարի իղձերը կատարէ. կատարուին նաև այն իղձերը, որ իւրաքանչիւր ոք իւր ազգի բարւոյն համար կը ցանկայ: Կաղօթենք որ Նոր տարին արդարև լինի շնորհաւոր, և այդ շնորհը թէ մենք և թէ մեր հետագայ.քը վայելենք: